

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ

ՄԵԼԻ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կես տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе, редакция «Мелі».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վերջին տեղեկութիւններ.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Տեղեկութիւնները գաւառից, ներքին լուրերը.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստանից.—ՀնթԱՔԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Արարանում տեղի ունեցած դէպքերի մասին կարող ենք յայտնել հետևեալը.
Մի երկու շաբաթ սրահից առաջ, մայիսի 24-ին, թուրք Ուշի գիւղի բնակիչները քշել տարել էին Դոթուր գիւղի հայերի տնային անասուններին դէպի իրանց գիւղը. Հայերը դիմումներ են անում ուշի-ցիներին վերադարձնելու իրանց տաւարը, բայց մերժում են ստանում. Յարաբե-րութիւնները լարվում են և երկու կողմից սկսում են պատրաստվել ընդհա-րուկների. Ուշի գիւղի թուրքներին սկը-սում են միանալ շրջակայ թուրքերը. Հայերին խոստանում են օգնութիւն Ա-բարանի և նոյն իսկ Շիրակի հայերը.

Հայերի կատարած մի ուժեղ յարձա-կումից յետոյ Դոթուր գիւղի գիւղի շը-րջանում, ուշիցիները և միւս թուրքերը մեծ խմբով շրջապատում են հայ Իլան-չալան գիւղը նրան աւերելու նպատա-կով. Սյդ տեղի է ունենում յունիսի 4-ին. Հայերը տեղեկանալով այդ մասին, երեք խմբով շտապում են դէպի Իլան-չալան. Սմբերից երկուսը գնում են Ա-բարանի Դալաչի գիւղի կողմից, իսկ մի-խումբը Կարբից. Սկսվում է հրացանա-ձգութիւն. Թուրքերը սկզբում կռուում են մեծ վստահութեամբ, արձակելով շատ գնդակներ, բայց երբ նկատում են, որ հայերը նրանց շրջապատել են ամեն կողմից և բռնել են աչիղ դիմքեր, այն ժամանակ նրանք շտապում են դէպի Ու-շի. Հայերը ընկնում են նրանց ետևից. Ուշի գիւղում տեղի է ունենում կատա-ղի ընդհարում. Թուրքերի մի մասը թող-նում է գիւղը և փախչում. Ուշին են-թարկվում է յարձակման և մի քանի տներ այրվում են.

Կռուող հայերի մի մասը երեկոյան վերադառնում է Իլանչալան, միւսը Կար-բի. Հետևեալ օրը առաւօտեան լսվում է, որ Օշականի և Աշտարակի մօտ գտնվող հայ գիւղերին սպառնացել են թուրքերը. Հայերը ուզում են առաջ գնալ և յար-ձակվողներին ցոյց տալ ուժեղ դիմա-դրութիւն. Նազրեկան թուրք գիւղի բը-նակիչները յետ մի քանի և փախչում են. Գիւղը բաւական աւերվում է ընդ-հարման միջոցին.

Ուշիցիների թրջական խմբերը փախ-չում են դէպի Փիրսօ և թափվում են ձորերում և այրելու. Հայերի մի մասը հետամուտ է լինում և ընկնում է նը-րանց ետևից. Թուրքերի մի մասը գնում է դէպի Թաքիա թուրք գիւղը թէ պա-տասարկելու համար և թէ նոր յարձա-կումներ կազմակերպելու նպատակով.

Սպանվածների թիւը յայտնի չէ. Հա-յերից քիչ մարդ է վնասվել. Հայ խմբե-րին տեսելու պաշարներ ուղարկվում են թէ Աբարանի և թէ Շիրակի գիւղերից. Թուրքերին նպաստ են հասցնում թուր-քերը.

Ընդհարումները դեռ չեն վերջացել. Ի միջի այլոց հաղորդում են, որ երբ հայերը մտնում են Ուշի գիւղը, նրանք թուրքերի շատ աներում տեսնում են Դոթուրի հայերի մորթած անասունները. Կէսը կերված, կէսը մնացած գրութեան մէջ. Մի քանի հայեր վերցնում են Ու-շիցի գաւառան լեռի դոթուրցիների վնա-ւը հաւատարմորէն նպատակով. Միւս-ները բաւական են համարում սուսած

շարդը. Թուրքերը գգում են իրանց ընկճ-ված.

Մեր թղթակից Ա.—Դօ երևանից մեզ գրում է յունիսի 6-ին.

Խոսված յոյզ դրութիւնը երևանի նա-հանգի դանազան մասերում շարունակ-վում է. Օր չէ անցնում, որ քաղաք չը հասնեն կոտորածներ, կոտորուածներ և դիւղեր հրդեհելու սովալի լուրեր.

Սյս անգամ ընդհարումների բնո հան-դիսացաւ Աշտարակի շրջանը, ուր թուր-քաբնակ Ուշի գիւղը ենթարկվեց յար-ձակման և աւերվեց հետևեալ հանգամանե-րներում.

Աշտարակի շրջանում գտնվում են մի քանի թուրք գիւղեր.—Ուշի 164 տ., Գի-չիկեքեկ 39 տ., Կոթուր 34 տ., Սաղ-մասալանք 28 տուն. Սյս երկու գիւղե-րում կան նաև հայեր.—Ագարակ 90 տ., Թաքիա 95 տ., Նազրվան 80 տ., Պերսի 55 տ., և այլն. Ուշի գիւղը ընկած լինելով Աշտարակից Ալեքսանդրօպօլ տանող ճանա-պարհի վրա, իր անհանգիստ տարբերով այդ գծի երթեկութիւնը յաճախ դարձ-նում էր անհնարին. Սյդ բանը աւելի նկատելի եղաւ վերջին ժամանակներս, երբ երևանի ընդհարումները տակն ու վրա արեցին նահանգի թուրք ժողովրդի աւանդական հակումները. Երևանի տա-ւալին օրվայ դէպքը ստակալի գրգռումն առաջ բերեց ամեն տեղ. Երկրորդ և եր-րորդ օրերի դէպքերը, որոնք այլ կերպ դարձրին իրենի դրութիւնը, բաւական մեղմեցին թուրքերի շարժումը. Բայց մի քանի շրջաններ և գիւղեր չուղեցին թող-նել իրանց սպառնական դիրքը. Սյդ գիւղերի կարգին պատկանում էր նաև Ուշին, որ և զոր գնաց իր բռնած դիրքի.

Ուշի գիւղի և աշտարակի մէջտեղ մայիսի 22-ին սպանվեց աշտարակից մի երիտասարդ՝ Արշակ Փիլոսոֆանց.

Մայիսի 24-ին Կոթուր գիւղի թուր-քերը, միանալով Աբարանի քրդերի հետ, յարձակվում են և հայերի նախըր՝ 300 տաւար՝ քղում տանում են. Կոթուրի հայ և թուրք թաղերը բաժանված են մի ձո-րակով. Կոթուրի նախիրը յետ բերելու համար օգնութեան են գնում օշականցիք, և ընդհարում ժամանակ վերաւորվում է Օհան անունով մէկը. Սյդ վերաւորին սայլի վրա դրած, երբ ստրաժնիկով տա-նում են Իլան-Չալան գիւղը, ճանապար-հին ուշիցիք յարձակվում են, վերցնում վերաւորին և սայլի հետ միասին. Սյս վրամուտնքը գայրոյթ է առաջ բերում հայերի մէջ. Գաւառապետը գնում է այդ շրջանը և մի կերպ հանգստացնում. Սակայն թուրքերը չեն թողնում սպառ-նական դիրքը. Գիւղիցեանդի, Կոթու-րի, Սաղմասալանքի, Փաքիակի, Փաքեի, Նազրեկանի և Կոշ թուրքերը քաշվում են Ուշի. այս համախմբումը աւելի ևս սպառնական է դառնում և այդ գիւղի մօտերը, մայիսի 26-ին, սպանվում են երկու զապաֆարցի հայեր. Սյդ կող-մերով յարաբերութիւնը միանգամայն ընդհատվում է. անա այս բոլորը միան-գամից հանում են շրջակայ հայ գիւղա-ցիներին համաբերութիւնից և յունի-սի 4-ին, շաբաթ օր, Աշտարակից, Կարբից և Իլան-Չալանից մի գնված խումբ յարձակվում է Ուշի վրա և ունե-նում է մի տաք կռիւ, որի ժամանակ սպանվում են թուրքերից մօտ 20 հո-գի. Ժողովուրդը փախչում է և գիւղը ենթարկվում է թալանի և հրդեհի. Միւս վերև յիշած թուրքաբնակ գիւղերը նոյնպէս յայտնի չափով ենթարկվել են հրդեհումներին.

Չբան-Քեանքան մի մեծ թուրք գիւղ է. այդ գիւղը դուրս է գալիս սար Աբարանի ստորոտները. հաճախ նրանց չուրու ճանա-

պարհին, յունիսի 5-ին քշել, տարել են նախիրը.

Գաղաքի դրութիւնը դեռ անորոշ և խառն է. խանութներից բացվում է մի մասը, միւս մասը տեղափոխվում է այս և այնտեղ.

Շէյխ-ուլ-Իսլամը դեռ ևս այստեղ է և Գարեգին վարդապետի հետ այսօր գնում են Ուշի կողմերը.

Թուրքերի մէջ այժմ նկատելի է մի երկպառակութիւն. խաղաղասիրականների թիւը մեծանում է, օրովհետև որոշ մասը համոզվեց, որ սրի քաղաքականութիւնը այնքան էլ վնասակար չէ.

Գիւղերը Շէյխ թաղի ներքին մասում, ուր սկսվում է թուրքերի թաղը, սպան-ված է մի կոպակ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Մենք մի անգամ յիշատակել ենք, որ Թիֆ-լիսում սկսել է հրատարակել «ՌԱԿԱՅԵԿԻՂ ԿՐԱՅ» անունով մի շաբաթաթիւթ. Առաջին համարի մէջ մի քանի խօսքեր կային ազգերի առաջադիմութեան, համաբարձրութեան, եղ-բայրութեան մասին. Մենք այդ ուղղութիւնն էլ արձանագրեցինք և այնուհետև այլ ևս ա-ռիթ չունեցանք տեսնելու նորածին շաբաթ-թիւթը. Բանից դուրս է գալիս, որ հէնց այդ առաջին համարն էլ եղել է միակ դրոշմի շա-ռտէ մարդավարին և քաղաքավարին. Շաբա-թաթիւթը, ինքն իրան մարդ մկրտելուց յե-տոյ, իսկայն շտապել է դառնալ վրացական շօվինիզմի, անհամբեր նացիօնալիստութեան բերան. Եւ որովհետև վրաց նացիօնալիստու-թիւնը դեռ շարունակում է և կը շարունակէ միշտ մնալ այն դժբախտ իմաստութեան մէջ թէ վրացին երջանիկ կը լինի միայն այն ժա-մանակ. երբ հայը կը դժբախտանայ վերջին ծայր, ուստի այդ շաբաթաթիւթը ամեն կի-րակի իր էջերը սկզբից մինչև վերջ լցնում է երկու տեսակ նիւթով—շօվինիստական ինք-նագոհութեան ներքով և յարձակումներ հայե-րի դէմ. Ուրիշ ոչ մի բան չէ հետաքրքրում շաբաթաթիւթի խմբագիր Բօրիս Էսաձէին, որ մի ժամանակ Վելիչկօի համահարգները մէկն էր, իսկ այսօր ամենայն ջերմութեամբ թեմած շարունակում է նրա դրօշակին ծառա-յիւ. Բաց էք անում շաբաթաթիւթը, որի ճա-կատին խոշոր տառերով գրված է «ՌԱԿԱՅԵԿԻՂ ԿՐԱՅ» («Կովկասեան Ներքին»): Գոնէ մի երկու բառ գտնէիք այդ երկրի մասին, գոնէ շաբա-թաթիւթին ընդունել, որ Կովկասում կան և ուրիշ ազգեր, ուրիշ շահեր. Ոչ. Ամեն ինչ վրացական է. Բայց ինչու դարձանաւ. Վրաց շօվինիզմը միայն իրան է անհուն և ամեն իսկ Միջերկրականի ափերից. Բօրիս Էսաձէն նոյն իսկ վրդովվում է, երբ ատում են թէ Թիֆլիսի հայերը հայեր են. Ամենին հայեր չեն դրանք, այլ վրացիներ, ասում է Վելիչկօի գրչով փաստաբանված «պատմաբանը». Շատ ծիծաղելի են վրացի նացիօնալիստները. Կամ նրանք օձիք են պատում հայ բուրժուազիա-յի ձեռքից, աղաղակում են թէ Վրաստանում ոչ վաշխատութիւն կը լինէր, ոչ որ և է ուրիշ անտեսական անբարեխտութիւն, եթէ չը լինէին հայ չարչիները, գինեւաձառները և այլն, կամ յանկարծ գալիս են յայտնելու, որ Վրաստա-նում հայեր չը կան, այլ միայն վրացիներ, ա-սել է թէ իրանց ազգային կրթին են սեղ-մում այն իսկ տարբերը, որոնք երէկ, անցեալ օրը օձի ծնունդներ, զգուհեք ու խայտառա-կութիւն էին յայտարարում. Օ՜, թշուառական կուրութիւն...

Բայց Տէրը նրանց հետ, այդ շօվինիստները, բացաիս դրած ազգամոլների հետ. Թող խեղ-ձերը ամբողջ Կովկասը տանեն իրանց մոլու-թեան նիւթիկ պատահանից, թող հայերին ուտեն թղթի վրա, թող շնորհ չանեն Վրաս-տանում նոյն իսկ մի հատ հայ,—խաթրի հա-

մար գոնէ մի հատ—ճանաչելու. Ո՞ւմ ինչ վը-նաս այդ բարեպաշտ ազգամոլական տենդից. Կը տապալկեն, նորից կը հանգստանան, կը սառչեն, որպէս զի նորից տապալկվին. Մեզ ինչ...

Սյսպիւն է եղել մեզ համար միշտ. Բայց այ-սօր, երբ հայութիւնը դառն տանջանքների մէջ է, ներքին չէր լինի, ընթերցող սպասել, որ մեր սիրելի վրացիները գէթ մի հասարակ քաղաքավարութեան համար, գէթ մի սէր այն վերքերի, որոնք, կարծում ենք, նուրբական պիտի լինեն մարդկային սիրտ կրող բոլոր անհասունների համար, գոնէ առ ժամանակ դա-դարեցնէին իրանց բամբասանները, իրանց խայթոցները. Ուրիշ ոչ մի առաքնութիւն չենք պահանջում մեր վրակից ազգամոլներից, գոնէ մի բան—լուրթիւն, լուրթիւն առժամա-նակ, մինչև որ կը բուժվին իրանց հարեան-ները վերքերը, մինչև որ նրանց սգաւոր սըր-տերից կը փարատվի յուսահատութիւնն ու խաւարը. Այնուհետև թող էլի կրծոտեն, էլի ուտեն, բայց այժմ, այսպիսի սարսափելի օ-րերում, նոյնպէս չարախօս ինչպէս միշտ,—սա հրէշաւոր երեւոյթ է նոյն իսկ ամենասա-նձարձակ նացիօնալիստութեան տեսակէտից. Ընդամենը երեք-չորս օր առաջ, յունիսի 5-ին, հրատարակվեց «ՌԱԿԱՅԵԿԻՂ ԿՐԱՅ»-ի № 11-ը. Եւ սկզբից մինչև վերջը յարձակումներ հայերի դէմ, ծաղր ու ծանակ, մի խօսքով այն ամենը, ինչ կարող է տալ կոյր շօվինիզմը. Մենք միայն արձանագրում ենք փաստը. Էսաձէն-րի և նմանների մարդավարութեան մենք կա-րօտ չենք և շնորհ նրանցից ինչպիսի մեղանից ոչ մէկը թոյլ չի տալ իրան. Հրապարակով մենք միայն մեր խորին զգուհեք կարող ենք յայտնել նրանց. Եւ ասում ենք, ամօթ, հա-զար ամօթ...

Նոյն համարում մենք տեսանք մի քանի թարգմանութիւններ վրաց լրագրիւններից. Պ. Էսաձէն հիացմունքով է ապագայի այդ թարգ-մանութիւնները, որպէս զի ցոյց տալ ուն-սերէն կարգացող հասարակութեան ինչ ինչ-պէս փառաւոր կերպով «Վիւերիան» և «Ճօրիս-Փուրցիլին» ջախջախում են «Մշակը» և առ-հասարակ հայերին. Աշխարհիս մէջ կայ մի ուրիշ կարգ—ընթերցողի միտքը փոքր ինչ լուսաւորելու համար, սովորաբար, բերում են և այն, ինչ գրում է հակառակ կողմը, այն, ինչին պատասխանում են. Բայց անկողմա-պահութիւն նոյն իսկ հօմէօպատական չափով սպասել վրաց շօվինիստներից,—այդ կը լինէր մի այնպիսի միաժողութիւն, որի վրա հաւերն անգամ կը ծիծաղէին:

Մեզ վրա շատ զուարճալի ապաւորութիւն թողցւեց «Ճօրիս-Փուրցիլին» պատասխանը «Մշակի» այն յօդուածի դէմ, որի մէջ մենք ապացուցել էինք, որ վրաց լրագրիւնը, հա-րահրոց բարձրացնելով թէ հայկական հան-րագիրը հայ բուրժուազիայի ծնունդ է, ինքն իսկ երկու ոտով և երկու ձեռքով ընկնում է բուրժուական ճահիճի մէջ. Մեր այդ նկա-տողութիւնը սաստիկ զայրացրել է վրաց լի-բերալները օրգանը. Բայց Աստուած մեծ է և զայրոյթով բան չի դառնայ. Դատապարտել էք ձեզ, դատապարտել էք, որ բուրժուազիայի մասին այնքան միամիտ հասկացողութիւն ունէք...

Ի դէպ՝ հայկական հանրագրի մասին. Պ. Էսաձէն թարգմանել է «Վիւերիայից» և մի ոմն Բաբրատ Միկիլայուսովի նամակը, որի մէջ մի քանի անգամ կրկնված է թէ հայերը իրանց հանրագիրը միտք են ունեցել ենթարկելու վրացիների բարեհայեցողութեան մի ժողովում, որ չէ կայացրել. Ահա ուրեմն, ինչ է դուրս գալիս. Պէտք էր ամենից առաջ և ամենից շատ, ի հարկէ, Էսաձէն, «Վիւերիայի», «Փուր-ցիլին» հաճութիւնը ինչպիսի և այնուհետև կա-րելի էր վստահ լինել, որ այդքան վախճանու չէին բարձրացնել. Հայերը մեղաւոր են, որ վրացական նացիօնալիստութեան խնամակալու-թիւնը չեն ընդունել:

Լամ ախորժակ է...

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՆԱՌԻՑ

Բ ա շ - Ն Ե ր ա շ է ն, յունիսի 5-ին: Գրուած եմ ծանր յոյզերի տակ: Հեռուէից, երկաթուղու գծից պարզ տեսնում ենք, որ ինչ Ծարուբի Ուլիա-Նորաշեն, Վարձապետ Դաւթը, Բէշ-տաշ գետից ծխում են: Ազատվել է միմիայն Սանդղարը, որ 2 օրվայ փառահեղ ինքնապաշտպանութիւնից և կուրց յետոյ զօրքը օգնութեան է հասնում: Հետեակ սարելովի պօլի զօրքերը, օդի մէջ մի քանի զալպ տարուց յետոյ, յետ են քաշվում: Այնուհետև ամենակրիտիկական քաղաքում վրա են հասնում հարկւր պլաստունները կողակներ, իրանց անվաններ վրացի օֆիցերի առաջնորդութեամբ: Հայերը սիրտ առած կողակներին հետ միասին նորից շարունակում են հերոսաբար կռուել: Թուրքերից սպանվում է մինչև 300 անձինք (հաստատւել է): Գետեմ, որովհետև մինչև իսկ թուրք սպանվածները թիւը 1000—1500 են հասնում: Ծարուբի հայ գեղերը, նախ քան այրվելը, ամբողջապէս թալանված են: Պակաս ինքնապաշտպանութիւն է ցոյց տուել և Ուլիա-Նորաշենը: Նրանք 3—5 ժամ անընդհատ կռիւց յետոյ զէպի լեռներն են փախչում իրանց մտքով ընտանիքով: Մինչև օրս էլ դեռ լեռներում են գտնվում Ուլիա-Նորաշենից: Ազգաբնակչութեան մէջ սոսկալի սով է տիրում:

Գ օ Ր ի ս (Զանգեզուրի գաւառ): Զը նայելով որ Նախիջևանի և Դարալագեզի գաւառները սահմանակից են Զանգեզուրի գաւառին և որ առաջիններից մեծ թիւով հայեր գաղթել են այս կողմերը, բայց մինչև այժմ այս կողմերում ամեն տեղ հանգաբար է և ոչ մի թշնամութեան դէպք տեղի չէ ունեցել, շնորհիւ գաւառապետ պ. Աւարեանի արթուն հսկողութեան: Նախիջևանի սարսափի լուրը այստեղ հասնելուն պէս, երկուդ կողմով, որ մի գուցէ արհաւիրքը տարածվի մեր գաւառի սահմանակից գեղերում, գաւառապետը, հետը վերցնելով Ներսէս վարդապետին և զազիւն, իսկոյն աճապարում է սահմանակից գեղերը: Հին Նախիջևանի սահմանում նա ահաւանտես է լինում գաղթականների աղիողորմ վիճակին: Գաւառի և անյապաղ օգնութիւնը այն է լինում, որ պ. Աւարեանին հրամայում է իսկոյն հայ մատակարարել այդ թուրքներին: Ապա նահանգապետից զօրք խնդրելով, ինքն անցնում է աւելի առաջ և մտնելով զանազան գեղեր՝ խիստ կարգադրութիւններ է անում, պատուիրելով ոչ մի կերպ չը խանգարել խաղաղութիւնը: Զօրքը ժամանակին հասնում է և նշանակվում սահմանակից գեղերում: Այժմ մեր գաւառում ամենուրեք հանգաբար է, միայն սպասվում է մի փոքր երկիւղ Արաբսի ափերից, որի համար և գաւառապետը խնդրածատոյց է եղել երեք հարկւր կողակ տալ իրան գնալու պարսից սահմանը և արգելելու հրոսակային խմբերին այս կողմն անցնելու: Այսօր հեռագիր ստացվեց, որ զօրքը ուղարկվում է: Շնորհիւ այսպիսի միջոցներով, հաստատ կարելի է ասել, որ Զանգեզուրի գաւառը առ այժմ դեռ կը մնայ որ և է խլրտուածից: Բացի դրանից պ. Մ. Աւարեանին, հաւաքելով տեղիս հայերի և թուրքերի ազդեցիկ մարդկանց և հասկացնելով նրանց, թէ ի՞նչ վատ հետևանքներ կարող են ունենալ փոխադարձ թշնամութեան դէպքերը, միշտ հրաւիրում է նրանց համերաշխ լինել և ուշադրութիւն չը դարձնել զանազան չարամիտ մարդկանց խօսքերին:

Մ Ե ծ - Ղ ա ր ա թ լ ի ի ս, 5 յունիսի: Յունիսի 4-ին մեր պ. գաւառապետը տեղը գալով հաւաքեց մեր շրջակայ գեղերից թուրք ժողովրդին և հայերից մի քանի անձնաւորութիւն և բաւական երկար խօսելով ներկայ եղբայրական դէպքերի մասին՝ ասեց, որ այդպիսի դէպքերը բայցայում են ժողովրդի տընտեսական դրութիւնը, չը պէտք է լսել չար անձնաւորութիւններին, որոնք չար սերմեր ցանկելով ժողովրդի մէջ, ֆրասում են ժողովրդին, թէ բարոյապէս և թէ նւթապէս:

ՆՆՐԻՒՆ ԼՈՒՐԻՆ

«Навкэз»-ում հրատարակված է հետեւեալ պաշտօնական տեղեկութիւնը. «Երաժ տեղեկութիւնները համաձայն, Երեւանի նահանգի մի քանի անձեր տարածում են ոչ միայն Կովկասում, այլ և նոյն իսկ Թաւրիկում մնալ և գիտաւորեալ լուրեր Երեւանի անցքերի մասին: Այդ լուրերը տրամադրում են մարդկանց դէպի վեճերի ու ընդհարումների սաստկացում: Որովհետև զործողութեան այդ եղանակը կա-

րող է աղմուկ առաջացնել զանազան ազգերի անհասանելի մէջ, այդ պատճառով ներկայ յայտարարութիւնով հրաւեր է կարգացվում ազգաբնակչութեանը խիստ զգուշութիւնով վերաբերվել չը ստուգված լուրերին»:

Մինիստրները խորհրդի նիստում ժողովրդական ներկայացուցչութեան մասին Բուլղարիի նախագիծը քննելիս, վերջնականապէս վճռեց մամուլին ոչինչ չը հաղորդել, որովհետև Մինիստրները Խորհուրդը չէ հանդիսանում իբր մի անկախ մարմին, այլ նրա որոշումները ենթարկվում են Բարձրագոյն հաստատութեան: Վերջին նիստում, լուրերին նայելով, որովհետ է ձայնի իրաւունք տալ Ռուսաստանի բոլոր ազգութիւններին, բացի Հրեաներին Ռուսաստանի և Միջին Ասիայի թափառական ցեղերից: Ընտրողական իրաւունքը կազմած է 1864 թվ. յունվարի 1-ի օրէնքների համաձայն: Շատ հաւանական է, ասում է «Р. С.» լրագիրը, որ Մինիստրները Խորհուրդը առաջիկայ շաբաթվայ մէջ վերջացնէ նախագիծը ընտրութիւնը, որովհետև սկզբունքի տարբերութիւններ չը կան»:

Բագուի խաղաղացման յանձնաժողովը որոշել է ուղարկել Երեւան մի փոքրիկ մասնախումբ հայերից և թուրքերից, որը գնալով Երեւան, ծանօթանայ տեղի վրա դէպքերի իսկան պատկերի հետ և ապա վերադառնալ և հանգստացնէ Բագուի հայ և թուրք ազգաբնակչութեանը: Այդ առիթով Բագուի քաղաքապետը պաշտօնականորէ Մաֆար-Ալիեւը մի նամակ է գրել Երեւանի քաղաքապետին Ազամալեանին, խնդրելով նրան աջակցել այդ ուսումնասիրող մասնախումբին:

Յունիսի 7-ին Թիֆլիսի դատաստանական պալատում ընկնում էր աստիճանաւոր Գէորգ Այվազեանի և Երեւանի լէյք-գրեմարեան գնդի զինուորներ՝ Մարտիրոս Պետրոսեանի, Եղիշ Թանգուլեանի, Միսաք Իգիթխանեանի, Տիգրան Նահապետեանի և Ալեքսանդր Մանասեանի գործը, որոնք մեղադրվում էին նոր պատժական օրէնսգրքի 131-րդ յօդուածով (զինուորների մէջ զինուորական պարտականութիւններ խախտելու գործը) գաղափարներ տարածելու համար: Գործը քննվում էր դռնփակ, իսկ դատաւճիւրը յայտարարվեց դռնբաց գիշերով ժամը 1 1/2-ին: Պալատը մեղաւոր ճանաչելով մեղադրեալներին՝ դատապարտեց նրանց բերդաբերութեան — Այվազեանին ու Պետրոսեանին մի-մի տարի, մնացածներին չորս-չորս ամիս: Մեղադրեալներին պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ՝ Մ. Գրուզինեցի, Տ. Յովհաննիսեան և Ե. Գյուլխանեան:

Մօտ օրերս Թիֆլիս կը հասնեն մի խումբ Ֆրանսիացի գրողներ և հրապարակախօսներ Անատոլ Ֆրանսի առաջնորդութեամբ: Մայրաքաղաքի լրագիրները ասելով՝ այդ Ֆրանսիացի գրողները մտադիր են ձամբորդել Ռուսաստանում, բայց որովհետև վերջին ժամանակներս Կովկասում տեղի ունեցան մի շարք անկարգութիւններ և արեւմտի դէպքեր, այդ պատճառով նրանք տեղի երկար են մնալու Կովկասում:

Երէկ առաւօտեան Թիֆլիս վերադարձաւ Նախիջևանի մեկնած հրապարակախօս պ. Օրէստ Սեմինը, որ գնացել էր այստեղ ուսումնասիրելու աղետի և ընդհարումների իսկական պատճառները: Որքան հնարաւոր էր, մենք և «Ի. Օճ.» տպագրում էինք նրա հեռագիրները և թղթակցութիւնները: Բացի Թիֆլիսի լրագիրներից, պարոնը հեռագրով ու պոստով թղթակցում էր և մայրաքաղաքի մեծ թերթիներին:

Յունիսի 7-ին, Թիֆլիսի քաղաքապետը պաշտօնականորէ իշխան Զեքեղով ստացաւ քաղաքապետին պ. Վերմիշեանից, Պետերբուրգից, հետեւեալ հեռագիրը. «Մայիսի 24-ին Մօսկվայում հաւաքված քաղաքագլուխները ցանկութեան յայտնեցին պարբերաբար հաւաքվել Մօսկվայում՝ խորհրդակցելու քաղաքների ընդհանուր շահերի մասին: Այդպիսի առաջին մասնաւոր խորհրդակցութիւն նշանակված է յունիսի 15-ին՝ ընկնելու քաղաքների ներկայացուցիչներին համաժողովների ծրագիրը և մտքերի փոխանակութիւն կատարելու այն հարցերի առիթով, որ դեկտեմբերի 12-ի ուշ կարգ է փետրվար 18-ի ընկնելից: Մի կէտը գնում են Սէնտաի լուծմանը: Ես հրաւեր ստացայ ներկայ լինել այդ խորհրդակցութեանը՝ դուժայի կողմից լիազօրութիւն ստացած եր-

կու ձայնաւորներին հետ միասին: Զեկուցէք այդ մասին դուժային: Արդիւնքը հեռագրեցէք»:

Թիֆլիսից Երեւան են մեկնել Լօնդօնի հրապարակախօս Բաուսը, Բերլինի հրապարակախօս Շուստը և Վիէնայի հրապարակախօս Բուշէրը: Նրանք գնում են անկարգութիւնների վայրերը:

Սուխումից հեռագրում են «Ի. Օճ.»-ին յունիսի 5-ից. «Սեբասթիա եպիսկոպոսի բարեհաճ թողութիւնով, 15 տարվայ ընդմիջութիւց յետոյ, այսօր Սուխումում արժանապատիւ ժամեղութիւնը լսել մայրենի—լրացիւն լեզուով: Ուրախութիւնն անկարգաբեր է: Ափսոս որ եկեղեցու փոքրութեան պատճառով բազմաթիւ աղօթողներ չը կարողացան ներկայ գտնվել»: Զապալա եպիսկոպոս:

ԳԱՅԱՆԻՑ մեզ գրում են. «Գանձակի գաւառի տափարակում այժմ հունձ է. արտերը պատկանում են այստեղ քաղաքական թուրքերին, բայց շնորհիւ ընդհանուր լարված, անհաստատ դրութեան, լեռնամասի հայ գեղացիները չեն վստահանում տափարակը հունձ գնալ: Այդպիսով, շնորհիւ «շէյթանի», առեւտում են թուրքերը և թէ հայերը. առաջինների արտերը մնում են առանց հնձելու ու փշանում են, իսկ երկրորդները մնում են առանց վաստակի»:

ՄԵԾ-ՂԱՐԱՔԻՆՍԱՅԻՑ մեզ գրում են. «Յունիսի 5-ին կարկտախառն սարափելի անձրև եկաւ, որի նմանը չէինք տեսած: Ինչպէս պատճառ են, «Վանանց» ձորի շուրջ դուրս է գցել 6—8 հատ գոմէշ, մի քանի հատ ոչխար և ուրիշ անասուններ: Աւելի շատ ֆրասվել է պ. Արոյեանը, որից մեծ քանակութեամբ մեղուներ է տարել: Մարդկային զոհեր, ինչպէս ասում են, կան, բայց հաստատ յայտնի չէ, թէ որքան է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՆԱՄԱՆ ՊԱՐՏԱՍՏԱՆԻՑ

Մալմաստ, մայիսի 25-ին
Անցեալ տարի Մալմաստում յայտնվող մօրերի մեծ ապրասի էր գցել ժողովրդի վրա, այնպէս որ բոլոր 3 թուամս ծախվող ցորենի գինը դեռ 2 շաբաթ առաջ սկսաւ 11 թումանի ծախվել, որովհետև զարնան հետ դուրս եկաւ նաև մօրերը, որը անցեալ տարվանից սերմ էր դրել գետին տակ: Սարսափելի մեծ քանակութեամբ յայտնվեց մօրերը և գետնի մի որոշ մասը ծածկված էր այդ անկուշ հիւրով, և արդէն սկսել էին արտերի մէջ մուտք գործել և եթէ քանի մը շաբաթ էլ նոյն դրութիւնը շարունակվելու լինէր, զգալի ֆրաս կը հասնէր ցորենին և անկասկած գինը կը բարձրանար. մինչև 15—20 թումանին: Սակայն շատ անգամ երբ Աստուած դարձ է տալիս, միւս կողմից դարձան էլ է հասցնում: Ի դարձան շատերի երկու շաբաթ առաջ չը գետնի մի կողմից, միջոնաւոր միատեսակ ճնճողակի մեծութեան թուղաններ յայտնվեցին ու երկուշաբաթվայ ընթացքում համարեա Մալմաստի բոլոր մօրերին ոչնչացրին, երբեմն ուտելով և երբեմն սատակեցնելով, այնպէս որ այժմ վերջացել է այդ խաթան ու ցորենի գինը մէկ շաբաթվայ ընթացքում 11 թումանից—8-ի է իջել, և յոյս կայ, որ մինչև 5 թումանից էլ իջնի: Ժողովրդի ուրախութեան չափ ու սահման չը կայ ցորենի զգալապէս է ժամանալու առիթով:

Անցեալ տարի Մալմաստի խեղճ ժողովուրդը ահաւանտես եղաւ Աստուածանից ուղարկված հետեւեալ եօթը պատահաներին: 1) Մալիկ հիւանդութիւն, որից 4—500 անմեղ երեխաներ զոհ եղան: 2) Թրեխնը, որը թէ ինձնութեան և թէ ծիրանի ծառերին անպաշտպան դարձրեց: 3) Պարսկա քրդական ընդհարումը, որից ընչ ֆրաս չը կրեց տեղական խեղճ ժողովուրդը: 4) Մորեխը: 5) Մի շաբաթ շարունակ տեղացի անձրևը, որից խաղողի այգիները սաստիկ ֆրասվեցին, ու նոյն իսկ Ուրմիի ճանապարհի վրա գտնվող Սակալի թրքաբնակ գեղը 100-ից ասել մարդկային զոհեր տուեց և 25—30 տուներ հիմնադատակ եղան գիշերային պահուն յանկարծակի վրա հասնող ջրի անագին հոսանքից: 6) Թանգութիւնը, ուստից թղթադրամի 5 դրանից 7 դրանի բարձրանալու առիթով շատ ազգայնական գները կրկնապատկել եղան: 7) Խօրեա հիւանդութիւնը, որից ամբողջ Պարսկաստանում մօտ 250,000 հոգի մեռան:

Վերոյիշեալ եօթ պատահաններից այս տարի ունենելու միայն մօրերը, թանգութիւնը ու թրեխը: Սակայն ուրախալի է ասել, որ մօրերը իսպառ ոչնչացաւ, թանգութիւնն էլ հետզհետէ է ժամանութեան վերածվելու վրա է (թղթադրամը 7 դրանից իջել է 6 դրանի): Այժմ միայն թրեխը գոյութիւն ունի, որը սակայն քիչ ծառերի ֆրաս է հասցրել:

Ֆիւրտիւրու ցեղապէս ձէֆֆէր աղան, որին անցեալ տարի պարսից կառավարութիւնը ընկել ու սպանել ջանաց, բայց չաշղկեց, երկու շաբաթ առաջ Թաւրիզից մի բարձր պաշտօնեայ, չը գետնի թէ ինչ խոստումներով ու յոյսեր տալով, ձէֆֆէր աղային հրաւիրեց Թաւրիզ, որը ներկայումս իր 6 քաջերով միասին գտնվում է Թաւրիզում, և եթէ նորագոյն հեռագիրներին վստահելու լինենք, իբր թէ պարսից կառավարութիւնը ձէֆֆէր աղային էսիլ թումանութեան բարձր տիտղոսին արժանացրել է և իբր քանի օրից վերջ մեծ շքով վերադառնալու է Մալմաստ, իր նախկին Զահրի գեղում հաստատվելու:

Առաջնորդական փոխանորդ Տ. Մաշոց վարդապետ Փափագեանի պաշտօնավարութիւնը Սալմաստում միայն երկու շաբաթ տևեց, որից յետոյ Փայշոյուղ-Ղալաաբի մարտ 28—31 կուր դէպքերի առիթով կանչվեց Թաւրիզ և ցարդ յայտնի չէ թէ արդեօք կրկին վերադառնալու է Մալմաստ կամ մէկ ուրիշին պէտք է սպասել:

Առաջիկայ շաբաթում Սալմաստի բոլոր ուսումնարանները կը փակվեն և ուսուցիչները մէկ որոշ մասը կը վերադառնայ Կովկաս, սակայն դեռ խնդիր է թէ առաջիկայ 1905—06 տարեշրջանի համար նրանց փոխարէն նորեր պիտի հրաւիրվեն կամ ոչ:

Բագուի փետրվարեան տեղափոխակ կարմիր օրերի առիթով, ուրախալի է ասել, որ Մալմաստում զգալի շփոթութիւններ առաջ չեկան և յոյս կայ, որ ոչինչ էլ չի լինի:

Մ. Ս. Փիւրան

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ԻՎԱՍԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

7 յունիսի
ՊԱՐԻՑ: Տեանցիկում կայացաւ ժողով, ուր չինական 17 շրջանների վաճառականները յճուցին պաշտպանել հակամաքիկական ագիտացիան և 60,000 տաէլ տուգանք առնել այն վաճառականներից, որոնք կը սկսեն ներմուծել ամէրիկական ապրանքները: Պօրտ-Արտուրում բնակութիւն հաստատած վաճառականները, անպաշտպան հրամանով, դուրս են գալիս այստեղից, տանելով ապրանքները: ՊԱՐԻՑ, 7 յունիսի: Ծովապետ Ռիշար Նշապակում է կալովրայի գլխաւոր հրամանատար Հուսէյն Արեւելքում: Եւպոնացիները յաղթութիւնները մեծ անհանգստութիւն և երկեղներ են յարուցում: Համեմատաբար կը մեծացնեն նաւատորմը: Վաշինգտօնի հեղինակաւոր շրջաններում հաստատում են, որ եւպոնական լիազօրներ նշանակելուց անմիջապէս յետոյ Բուզվէլտ կառավարիչ զինադաւար: Եւպոնիան կը համաձայնի այն պայմանով, որ զինադաւարը ստորագրված լինի գինեալ Լինկվէլի և մայրաք Օյամայի կողմից: Եւպոնիան կառավարիչ, որ լիազօրները խորհրդակցութիւնը Վաշինգտօնում կայանայ յուլիսի 19-ին: Եւպոնական լիազօրները դեռ ևս չեն նշանակվում: Գերմանական ճիշդ աղբիւրից հաղորդում են, որ Գերմանիան ցանկանում է համաձայնութիւն Ֆրանսիայի հետ ոչ միայն Մարօկկօ վերաբերմամբ, այլ իսլամական Գերմանիայի յարաբերութիւնների վերաբերմամբ դէպի Ֆրանսիական կօլօնիաները:

ԽԵՐՍՈՆ: Առեւտրականները և գործակալատարները խորհրդակցութիւնը սահմանեց 12 ժամանալ օր ամառը և 13 ժամանալ՝ ձմեռը: Զաքի համար որովայնից 1 1/2 ժամ,

ՎԱՇԻՆԳՏՈՆ: «Ձիկազօ Բէկօրը» Հէրալդ լրագրի խօսքով, նախագահ Ռուզվէլտ անձամբ, անմիջապէս յարաբերութիւն սկսեց Վիէնի կայսրի հետ: Նրանք գործ դրեցին իրանց միայն յայտնի ծածկագիրը: Յայտնում են, որ այդ հեռագիրները վերաբերվում էին խաղաղութեան բանակցութիւնների հարցին: Ռուզվէլտը գրադրութիւն սկսեց համարեա անյապաղ ցուսիսեան ձախառամարտից յետոյ և շարունակեց փորձերը այնքան ժամանակ մինչև որ Ռուսաստանը համաձայնեց ընդունել իր ներկայի խաղաղութեան հարցը: Ռուզվէլտին աջակցում էր Վիէնի կայսրը Ռուսաստանի վրա ազդելու համար:

ՄԻՆՍԿ: Տեղեկութիւններ ստացվեցին այն ահագին հրդեհի մասին, որ ամբողջապէս լա-

փեց Մօրդեչնօի աւանը, Վիլնօի նահանգում։ Մեծ մասամբ հրէայ ազգաբնակիչները վերջ-
նականապէս մնանկացած է։

ԳՈՒՆԺՈՒԼԻՆ, 7 յունիսի։ (Սեպ. թղթ.)։
Ընդհանուր դրութիւնը անփոփոխ է։ Գունչ-
ժուլինի մօտ հանգիստ է։ Վերջին արշաւանքի
ժամանակ գերի բռնված հազօնացիները ու-
ղարկված են Ռուսաստան։

ՖէՅ, 6 յունիսի։ Մարտիկօի միւստարու-
թիւնը վճռեց Ուզբեկ ուղարկել 500 մար-
դուց բաղկացած օսմանդակ զօրք։ Գերմանական
դեսպանութիւնը շարունակում է անդադուր
յարաբերութիւն պահպանել սուլթանի հետ։

ԹԱԻԻԶ, (Զուլֆայի վրայով), 2 յունիսի։
Երեկ լուր ստացվեց, որ Երևանում սպանված
է մի հոգևորական, որը Թաւրիզի մուշտարի
ազգական է։ Բազմաբնակ Ժողովուրդի
ամբողջ հաւաքվեց և լուսն էր դրողով ճա-
ռեր։ Տրամադրութիւնը շատ ծանր է։ Գիշերը
անհանգիստ անցաւ։ Ամբողջ քաղաքում կանգ-
նեցրված են զինեցապահ խմբեր։

ՆՐԻՍՏԻԱՆԻՆ, 7 յունիսի։ Այստեղ ապ-
րող շվեդացիները մեծ ժողովը որոշեց զիմել
Օսկար Թագաւորին մի պէտքից ազատ և խնդ-
րել նրան խաղաղ կերպով լուծել ծագած վե-
ճը։ Նույնը պահ է մէջ ընդգծվում է, որ Նօրվե-
գիւսն լաւ է վերաբերվում շվեդներին, և այժ-
մեան բարոյութիւնները ոչինչ չեն փոխել այդ
տեսակետից։

ՄՕՎԿԱ, 7 յունիսի։ Այսօր մեծ հրդեհ
էր արբունի հայթիայթող Տիլի կաշեգործա-
րանում։ Դրաման որոշեց 10,000 ռ. պահեստի
զինւորները մատակարարութեան արտակարգ
ծախսերի համար ութերորդ մօբիլիզացիայի
ժամանակ։ Թագաւոր Կայսրի պատասխանը
զէմսավօր և քաղաքացիներին պատգամա-
ւորութեանը անկողծ ուրախութեան զգաց-
մունքներ առաջացրեց այստեղ։ Ժամանակ
յունական թագուհին և ճանապարհ ընկաւ Մեծ
Իշխան Կոստանդին Կոստանդնուպօլիսի վօյ-
կալական կարւածքը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, Պաշտօնական։ Ուղղադրու-
թիւններ և լրացումներ յունիսի 6-ին շրջաբե-
րանում։—Յունիսի 6-ին, կէսօրվայ ժամի
12՝30-ին, բախտ ունեցան ներկայանալու Նո-
բին Մեծութեան Պետերօֆում, Ֆերմօրեան
պալատում, Պետերբուրգ եկած գեմսավօր և
քաղաքային գործիչներ. 1) Կոմս Պ. Ա. Գեյ-
զէն, Օսոյցիցի ադմուրալտութեան գաւառա-
կան պարագլուխը, Պիլովի նահանգական ձայ-
նաւոր. 2) Իշխան Գ. Ե. Լիվով, Տուլայի նա-
հանգական գեմսավօր վարչութեան նախագահ,
3) Ն. Ն. Լիվով, Սարատովի նահանգական
ձայնաւոր, 4) Ի. Ի. Պետրուկիւիչ, Տվերի
նահանգական ձայնաւոր, 5) Ֆ. Ա. Գօլովին,
Սուխվայի գեմսավօր վարչութեան նախագահ,
6) Իշխան Պ. Գ. Դօլգորուկով, Բուցսկի գա-
ւառական ադմուրալտութեան պարագլուխ,
սենեկապետ Բարձրագոյն Դրան, 7) Ն. Ն.
Կօլպալիսկի, Նարիվի նահանգական ձայնա-
ւոր, 8) Ն. Ա. Նօվոսիլցի, Տիմիւիլովի գա-
ւառական ադմուրալտութեան պարագլուխ, 9)
Ֆ. Ի. Բօրչիւկ, Տվերի նահանգի Վեսեգոնսկի
գաւառական ադմուրալտութեան պարագլուխ
կաշիգէտ, 10) Իշխան Գ. Ի. Շախովսկոյ,
Նարիվի նահանգական ձայնաւոր, 11) Իշ-
խան Ս. Ն. Տրուբեցկոյ, պրօֆէսոր Մօսկվայի
համալսարանի, 12) Բարոն Պ. Լ. Կօրֆ, ձայ-
նաւոր Պետերբուրգի քաղաքային դումայի,
13) Ա. Ն. Նիկիտին, Պետերբուրգի Դումայի
նախագահի պաշտօնակատար, և 14) Մ. Պ.
Ֆեդօրով, ձայնաւոր Պետերբուրգի Դումայի։
Պրօֆէսոր Իշխան Ս. Ն. Տրուբեցկոյ զիմեց
Թագաւոր Կայսրին հետեւել խօսքերով։ «Ձերը
Կայսրական Մեծութեան, Թոյլ տուէ՛ք յայտ-
նել Ձեր Մեծութեան մեր լուր և անկեղծ
շնորհակալութիւնը, որ Դուք ընդունեցիք մեզ
մեր Ձեզ դիմելուց յետոյ։ Դուք հասկացաք
այն զգացմունքները, որոնք զեկալարում էին
մեզ և չը հաւատացիք նրանց, որոնք ներկա-
յացնում էին մեզ, հասարակական և գեմսավօր
գործիչներին, գրեթէ իբրև Գահի գաւառա-
ներ և Ռուսաստանի թշնամիներ։ Մեզ այս-
անդ բերել է մի զգացմունք միայն—սէրը դե-
պի հայրենիք և գեմսակցութիւնը այն պարտ-
քի, որ ունենք Ձեր առջև։ Մենք գիտենք,
Թագաւոր, որ այս քաղաքի Դումայի տանջվում
էր մեզ ամենքիցս շատ։ Մեզ համար ուրա-
խակ էր ասել Ձեզ միութարանքի խօսք, և
հիմն վերստին Ձեր Մեծութեան այժմ
այսպիսի անսովոր ձևով, հաւատացե՛ք, որ այս-
պէս անել հարկադրում է մեզ պարտքի
զգացմունքը և ընդհանուր վտանգի գեմսակցու-
թիւնը, վտանգի, որ մեծ է։ Թագաւոր, այս
խառնակութեան մէջ, որ բռնել է ամբողջ
պետութիւնը, մենք տեսնում ենք ոչ թէ պե-

տական յանցաւոր դատաւարութիւն, որ ինքն ըստ
ինքեան, նորմալ պայմաններին մէջ, վտանգա-
ւոր չէր լինի, այլ ընդհանուր տանկութեամբ
թիւն և կատարեալ կազմաւորութիւն, որի
մէջ իշխանութիւնը դատաւարութեան է ան-
կարողութեան։ Ռուս ժողովուրդը չէ կորցրել
հայրենասիրութիւնը, չէ կորցրել հաւատը դե-
պի Ցարը և դէպի Ռուսաստանի անխորտա-
կելի կարողութիւնը, բայց հէնց այդ պատ-
ճառով էլ նա չէ կարողանում ըմբռնել մեր
անաջողութիւնները։ Նա զգում է իրան խա-
ւած, և նրա մէջ ծնվում է միտք թէ խաբում
են Ցարին, և երբ ժողովուրդը տեսնում է թէ
Ցարը բարեւ է կամենում, իսկ կատարվում է
չարեւ, որ Ցարը ցոյց է տալիս մի բան, իսկ
կատարվում է բոլորովին ուրիշ բան, որ Ձեր
Մեծութեան նախապաշարունակները աղճատում
են և յաճախ գործադրում են կեանքի մէջ
այնպիսի մարդկանց ձեռքով, որոնք աշխարհ
թշնամի են բարենորոգումներին,—այն ժամա-
նակ այդպիսի համոզմունքը նրա մէջ աւելի
ևս աճում է։ «Դատաւարութեան» սարսափելի
խօսքը արտասանված է, և ժողովուրդը դա-
ւաճաններ է որոնում ամենքի մէջ, թէ գե-
ներալներ, թէ Ձեր խորհրդարաններ, և մեր
մէջ, թէ առհասարակ բոլոր տէրերի մէջ։ Այս
զգացմունքը շահագործվում է զանազան կող-
մերից. ոմանք ուղղում են ժողովուրդը կա-
րուածատէրերի դէմ, ոմանք՝ ուսուցիչներին,
գեմսավօր բժիշկներին, կրթված դատաւարների
դէմ, ազգաբնակչութեան մի մասերը գործում
են միւսների դէմ։ Ատելիութիւնը, անորոշ
և անզուտ, որ ամբարվել է վերաւորանքների
և ձախմբների դարեւով, որին սուր կերպարանք
են տալիս կարեւր ու վիշտը, իրաւազրկու-
թիւնը և անասական ծանր պայմանները,—
բարձրանում է և աճում, և նա վտանգաւոր
է աւելի այն պատճառով, որ սկզբում դնվում է
հայրենասիրական ձևերի մէջ, աւելի վարա-
կիչ է այնքան շատ, որքան հեշտ բորբոքում
է մասսաները։ Անա այն սպառնալից վտան-
գը, Թագաւոր, որ մենք, մեր տեղերում ապ-
րողներ, չափել ենք ամբողջ խորութեամբ և
նշանակաւորութեամբ և որի մասին պարտք հա-
մարեցինք յայտնել զիմսութիւն Ձեր Կայ-
սերական Մեծութեան։ Միակ էլքը այս բոլոր
ներքին դժբախտութիւններից, այն ճանա-
պարհ է, որ ցոյց էք տուել Դուք, Թա-
գաւոր—ժողովուրդի ընդամասնների գումարու-
մը։ Մենք ամենքս հաւատում ենք այդ
ճանապարհին, բայց գիտենք, սակայն, որ
ամեն մի ներկայացուցչութիւն չէ կարող ծա-
ռայել այն բարեւ նպատակներին, որ Դուք
պահանջում էք նրանից։ Նա պիտի ծառայէ
ներքին խաղաղութեան հաստատման. ստեղ-
ծագործութեան և ոչ թէ ազգաբնակչութեան
մասերի անշտման և վերջապէս նա պիտի
ծառայէ պետական վերանորոգման, ինչպէս
ասել է Ձեր Մեծութիւնը։ Մենք մեզ իրազօ-
ր ենք համարում խօսել այստեղ այն վերջնա-
կան ձևերի մասին, որոնց մէջ պիտի ձուլվի
ժողովուրդական ներկայացուցչութիւնը, ոչ էլ
ընտրութեան կարգերի մասին։ Եթէ Թոյլ կը
տաք, Թագաւոր, մենք միայն կարող ենք
ասել այն, թէ ինչն է մեզ ամենքս միաց-
նում, ինչն է միացնում այն ուսումնասիրող
մեծամասնութիւնը, որոնք անկեղծաբար ու-
ղում են գնալ Ձեր նախագահ ճանապարհով,
պէտք է, որ Ձեր բոլոր հպատակները հաւա-
սար չափով և անխտիր զգան իրանց ուսու-
նալ քաղաքացիներ, որ ազգաբնակչութեան առան-
ձին մասերը և հասարակական խմբերը չը
հեռացվեն ժողովուրդական ներկայացուցչու-
թիւնից, այդպիսով չը դարձնեն թշնամի
վերանորոգված կարգի, պէտք է, որ չը լինին
իրաւագործներ և զրկվածներ։ Մենք կը կա-
մենայինք, որ բոլոր Ձեր հպատակները, թէ-
և օտար լինէին մեզ կրօնով և արեւնով, տես-
նէին Ռուսաստանի մէջ իրանց հայրենիքը,
Ձեր մէջ—իրանց Թագաւորին, որ նրանք
զգային իրանց Ռուսաստանի որդիներ և
սիրէին Ռուսաստանն այնպէս, ինչպէս մենք
ենք սիրում։ Ժողովուրդական ներկայացուցչու-
թիւնը պիտի ծառայէ միութեան և ներքին
խաղաղութեան գործին, ուստի նոյնպէս չէ
կարելի ցանկալ, որ ներկայացուցչութիւնը
լինի դատաւարային Որդւն Ռուսաց Թա-
գաւորը—ադմուրալտներ Թագաւոր չէ, գիւ-
ղացիներ և անկախ մի զաւանակներին Թագաւոր
չէ, դատաւարներ Թագաւոր չէ, այլ ամբողջ
Ռուսաստանի Թագաւոր է, այնպէս էլ ամ-
բողջ ազգաբնակչութիւնից ընտրված մարդիքը,
որոնք կոչվում են Ձեզ հետ միասին Ձեր
Արքայական գործը կատարելու, պէտք է ծա-
ռայեն ոչ թէ դատաւարային, այլ ընդհանուր
պետական շահերին։ Դատաւարային ներ-

կայացուցչութիւնը անխուսափելի կերպով
պէտք է ծնենէ դատաւարային խորութիւն
այնտեղ, ուր նա ամենեւին գոյութիւն չու-
նի։ Այս ժողովուրդական ներկայացուցչու-
թիւնը պէտք է ծառայէ «պետական վերա-
կազմութեան» գործին։ Բիւրօկրատիան գո-
յութիւն ունի ամեն տեղ, իւրաքանչիւր
պետութեան մէջ և, դատաւարակալ նրան,
մենք մեղադրում էինք ոչ թէ առանձին անհատ-
ներին, այլ «պրիկազի կազմը»։ Վերանո-
րոգված կազմի մէջ բիւրօկրատիան պէտք է
իր պատշաճաւոր տեղը բռնէ։ Նա չը պէտք է
յափշտակէ Ձեր Ինքնակալական իրաւունք-
ները, նա պէտք է պատասխանատու դառնայ։
Անա այն գործը, որին պէտք է ծառայէ ընտ-
րով ներկայացուցչիներին ժողովը։ Նա չէ կա-
րող բիւրօկրատիական հիմնարկութիւնների
հին սխառնի կարկատան լինել, և դրա հա-
մար նա պէտք է զրկվի անկախ և նրանց ու
Ձեր մէջ չէ կարող դրվել մի նոր պատ ի
դիմաց կայսրութեան բիւրօկրատիական բարձր
հիմնարկութիւնների։ Դուք ինքնեղ կը հա-
մոզվէք այդ բանի մէջ Թագաւոր, երբ կը կան-
չէք ժողովուրդի ընտրեալներին և դեմ առ դեմ
կը կանգնէք նրանց հետ, ինչպէս մենք կանգ-
նած ենք Ձեր առաջ։ Վերջապէս Ձեր նախա-
գահ վերանորոգութիւնները այնքան մօտ են
վերաբերվում ուսու ժողովուրդին և հասարակու-
թեանը, որն այժմ կոչվում է մասնակցելու
պետական աշխատանքին, որ ուսումնասիրող
միայն չեն կարող, այլ և՛ ինչ պէտք է անտարբեր
միայն դեպի նրանց, այդ պատճառով անհրա-
ժեշտ է տալ ամենայն հնարաւորութիւն
ընկելու պետական բարենորոգութիւնը ոչ
միայն ընտրեալներին առաջին ժողովում, այլ
այժմ և եթ մասնակց և հասարակական ժողով-
ներին մէջ։ Կորստաբեր հակառակութիւն կը լի-
նէր պետական աշխատանքի հրաւիրել հասա-
րակական ոյժերը և դրա հետ միասին չը
թոյլատրել ազատ ըննադատութիւն։ Դա կը
վերացնէր հաւատը դէպի բեֆօրմիսի իրա-
կանացում և կը խանգարէր կեանքի մէջ
նրանց աշխուրթեամբ գործադրելուն։ Թագա-
ւոր, Ռուսաստանի վերանորոգումը պէտք է
լինի վստահութեան վրա։—Դրանից յետոյ
Պետերբուրգի դումայի ձայնաւոր ֆեդօրովը
ասաց հետեւեալը. «Թոյլ տուէ՛ք, Ձեր Մեծու-
թիւն, իշխան Տրուբեցկոյ այս քաղաքի ասած-
ներին յարակցել և այն, ինչ որ անհրաժեշտաց-
նում է յուզում և քաղաքները։ Դադարն ու
զիւզն իբրեւ այնքան մօտ են, որ զիւրի ամեն
մի թշուառութիւնն արտացոլում է իսկոյն
քաղաքի բարօրութեան վրա։ Աղքատանում է
զիւզը, մենք էլ ենք նեղվում։ Մենք չենք կա-
րող չանհանգստանալ մօտ ապագայի հարցերի
առթիւ։ Ձեր Մեծութիւն, ինչպէս էլ որ
վերջի պատերազմի և խաղաղութեան հարցը
այնուամենայնիւ պատերազմը երբ և է պէտք
է վերջանայ, և այն ժամանակ անհրաժեշտ կը
լինի բուժել նրա հասցրած տնտեսական և
ֆինանսական վէճերը։ Մենք նախատեսում
ենք, որ մեր բիւրօկրատը դրա պատճառով ա-
ւելանալու է տարեկան միլիոնաւոր ռուբլի-
նով։ Որպէս զի այդ միլիոնները ձեռք բեր-
վին, որպէս զի այդ ծախքերը ծածկելու աղ-
բիւրներ ձարվեն, պէտք է սկսել անգին կու-
տուրական աշխատանք, պէտք է հոգ տա-
նել երկրի արդիւնաբերական ուժերի աւել-
ացնելու մասին, իսկ այդ հնարաւոր է
միայն այն ժամանակ, երբ կեանքի կը կոչվի
այն ամենը, ինչ որ կայ ժողովուրդի մէջ ձեռ-
բերով լի և տաղանդաւոր և երբ առաջ կը
բերվի լայն ինքնագործունէութիւն հասարա-
կութեան մէջ։ Ճշմարիտ է, Ձեր Մեծութիւն
ունի ամբողջիկ, այն էլ տաղանդաւոր, բայց քիչ
են նրանք, և կարող են ժողովուրդի պէտքերին
ու կարեւորներին նայել միայն իրանց կարե-
ւէտներից ու դիւանատներից, այն ինչ առաջի-
կայ աշխատանքը պահանջում է անմիջապէս
կեանքին մօտ կանգնած մարդիկ։ Անա թէ
ինչու քաղաքներն էլ ամբողջապէս միանում
են գեմսակի մարդկանց ձայնին, որոնք կանգ-
նած են ուղղակի կեանքի մէջ, որոնց միտքը
հազորդեց այստեղ իշխան Տրուբեցկոյը։—
Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց
պատասխանել։

«Սա ուրախ եմ լսել ձեզ։ Ձեմ կատկածում, պա-
րոններ, որ ձեզ առաջնորդում էր հայրենասի-
րական ջերմ գգացմունք, երբ դուք դիմեցիք
անսխալապէս ինձ։ Ձեզ եմ եմ ամբողջ ժողովուրդի
հետ միասին եմ ամբողջ հոգովս ցանցի եւ ցա-
ւում եմ այն քուսաւորութիւններ համար, որ
անսխալ Ռուսաստանի պատերազմը եւ որ ան-
հրաժեշտ է դեռ հայրենասիր եւ մեր ներքին
լուր անկարգութիւնների մասին։ Հետագիւր՝ ձեռ
կատկածներ։ Իմ կամքը—Իմ Կայսերական կամ-

քը—անցողողդ է եւ բնօրինակ անձեր կը հրա-
ւիրվեն պետական աշխատանքի կառնաւորապէս։
Սա ամեն օր հետեւում եմ եւ կանգնած եմ այդ
գործի համար։ Դուք կարող եք հաղորդել այդ
ձեռ բոլոր մեծիմեքներին, ինչպէս գիւղում ապ-
րողներին, այնպէս էլ քաղաքացիներին։ Սա հաս-
տատու հաւատում եմ, որ Ռուսաստանը դուրս կը
գալ վերանորոգված իրան հասած փորձանքից։
Թող վերականգնվի այն, ինչ որ եր հնումը,—
Յարի եւ ամբողջ Ռուսաստանի միացումը, իմ
եւ գեմսակի մարդկանց միջոց յարաբերու-
թիւնը, որ կը ծառայէ իր կարգի հիմք, հա-
մապատասխան ուսումնական իմաստուն սկզբունք-
ներին։ Հաւատում եմ ձեռ անկեղծ ցանկութեանը
գործակցել ինձ այդ աշխատանքում։—Դրանից
յետոյ Կայսրը արժանացրեց բոլոր ներկայա-
ցածներին ողորմած խօսակցութիւններին։

8 յունիսի
ՆՐԻՍՏԻԱՆԻՆ, 7 յունիսի։ Մտորտինգը
բոլոր ձայների մեծամասնութիւնով՝ 10-ի
դէմ ընդունեց Թագաւորին տալու ուղերձը։
Այդ ուղերձով ստորութիւնը խնդրում է Թագա-
ւորին, բիւրօկրատի և շվեդական ժողովուրդին
գործակցել միութեան հարցի խաղաղ
լուծմանը, երկու ազգերի բարեկամութեան
և հաւասարութեան ապահովեցմանը։ Ինչ որ
պատահել է, պատմական զարգացման ար-
դիւնք է և չէ կարելի ոչնչացնել։ Այդ պատճա-
ռով ստորութիւնը չէ ուղում մասնել Թագա-
ւորի թղթում շօշափված խնդիրներին ընդու-
թեան մէջ սահմանադրութեան և պետական
իրաւունքի սահմաններում։ Շվեցիայում
արտայայտված կարծիքներից ստորութիւնը
տեղեկացել է, որ ունիայի խախտումը
Շվեցիայում համարվում է վերաւորական։
Ստորութիւնը երբեք այդ մտադրութիւնը չէ
ունեցել։ Նօրվեգիական ժողովուրդը երբեք
ոչ մի դառն դրացմունք չէ տածել ոչ դէպի
Թագաւորը, ոչ էլ դէպի շվեդական ժողո-
վուրդը։ 90 տարվայ միասին աշխատանքը
ծնեցրել է անկեղծ բարեկամութիւն դէպի
Շվեցիա։ Այդ զգացմունքներն այժմ նորից
կը վերակենդանանան և կամրապնդեն փոխա-
դարձ համաձայնութիւնը։ Հաւատարմով, որ
Շվեցիան էլ այդ կարծիքի է, ստորութիւնը
առաջարկում է ճանաչել Նօրվեգիայի
բարձրագոյն իրաւունքները և բանակցութիւն-
ներն սկսել հարցը վերջնականապէս լուծե-
լու համար։ Ստորութիւնը իր կողմից պատրաս-
տ է կատարել ամեն մի օրինական ցանկութիւն։
10-ի, 7 յունիսի։ Տօրգովի փողոցում
չարամիտներն ատրճանակ արձակեցին Կօրնի-
ւով պահապանի վրա։ Գնդակը ծակեց նրան
անց կացաւ, վտանգաւոր վէճը հասցնելով։
ԿՐԵՄԼԻՆ, 7 յունիսի։ Դադարեց
«Южн е Слово» լրագիրը։
ՎԱՇԻՆԳՏՈՆ, 7 յունիսի։ Լուրերին նայելով,
Բուզվելու վախում է, որ Մանչուրիայում
արեւմտահեղ ճակատամարտը կարող է վատ
ազդեցութիւն ունենալ սկզբած խաղաղասիրա-
կան բանակցութիւնների վրա, և պնդում է
կուսող կողմերին, որ անյապաղ զինադադար
կընեն։

10-ի, 7 յունիսի։ Համայնքների ժողո-
վում իբր պատասխան հարցապնդման, Բալ-
ֆուրն ասաց, որ ինքը կասկածում է, թէ
ճշմարիտ չէ անգլիական «Սէնտ-Վիլը» շրգե-
նակ ընկղմումը ուսումնական կրթչներին ձեռ-
քով։ Անգլիական կառավարութիւնը անյապաղ
դիմում արեց այդ առթիւ Ռուս կառավարու-
թեան, որի հետ դեռ գրադրութիւնը վարվում է։
Անգլիական կառավարութիւնը շատ լուրջ է
վերաբերվում այդ գործին, որովհետեւ ամենա-
խիստ հաւատարմագումներ է ստացել, որ այդ-
պիսի բան չէ արվել։ Բալֆուրը խոստացաւ
նոյնպէս վաղը բաւարարութիւն տալ «Նայտ-
Կոմանդէր» շրգենակ գործի առթիւ։

8 յունիսի
ԲԵՐԼԻՆ, 7 յունիսի։ «F. Z.»-ի խրատա-
նիայի թղթակիցը լիազօրութիւն է ստացել
յայտնելու, որ Նօրվեգիան ոչ մի տեղ չկանք
չէ գործ դնելու իր անկախութիւնը ճանաչե-
լու համար, որովհետեւ նա միշտ անկախ պե-
տութիւն է եղել անձնական ունիայով միա-
ցած Շվեցիայի հետ։ Նօրվեգիան սպասում է
միայն, որ իր արտասահմանեան դիվաւտաւա-
կան գործակալներին ճանաչեն։

ՎԻՆՆԻՆ, 7 յունիսի։ Պարսկ շահը մեկնեց։
ՄՏՈՎՅՈՒՄ, 7 յունիսի։ Բացվեց Բիւրօկրատի
նիստը։

ՄԱԴՐԻԴ, 7 յունիսի։ Վիլավիդեզի կարե-
ւէտի հրաժարման պատճառը պարզաւորա-
կան օպպօզիցիան է։

ՊԱՐԻՅ, 8 յունիսի։ Յունաց Թագաւորը
յանձնել է Բալլիկ կարեւոր կազմել։
«Temps» և «Journal des Debats» մատնացոյց

Электротечатня типографскаго Т-ва „Гермесъ“. Мад. ул. № 15.